

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Ըզեզ կ'երգեմ ես նորէն,
Յաւերժական իմ երազ,
Այս հեռաւոր ավերէն.
Դուն մեր պարգեւ, պատուհաս...

Որքան հեռու ըլլամ ես,
Այնքան մօտիկ եմ քեզի,
Սիրքս սիրոյդ ողջակէզ,
Թագունիդ իմ երազի:

Դուն Հառաչն իմ մայրական,
Դուն իմ եղբօրք անուն,
Դուն իմ փիւնիկ Հայասան,
Դուն լոյսի երգ կարկաչուն:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ



ՓԱՈՒՔ ՔԵԶ ՏԵՐ...:

«Փառք Քեզ Տէր» որ բաշխումիդ մէջ շնորհաց
Դուն չես մոռցած հանել բաժին ոչ ոքին.
Տալով մէկուն հաննար, միսին ոյժ կամ գանձ,
Որպէսզի մարդ չգանգատի իր բախսին:

Սակայն ինչքան՞ սարօրինակ են իրաւ
Մեր բողոքներն ու սրտնջներն ապօրէն,
Երբ կ'անտեսենք մեր Տիրոջ գուրք անբաւ
Ու կ'աւաղենք մեր բախսերուն դառնօրէն:

Տէ՛ր, անեցո՛ւր սրած պարգեւըդ ինձի,
Դո՞ն եմ Քեզմէ ու չեմ ցանկար աւելին.
Հօգուոյս մէջ միշտ վառ պահէ ջա՛հը յոյսի,
Որ չգայթի ան կիրեւէն մարդկային:

Ու անդադար, ըլլայ ցերեկ կամ գիշեր,
Շրթունքս կրկնէ երգն այս անդու «Փառք Քեզ Տէր»:

Գ. ՃԻՆԻՎԻԶԵԱՆ